# ՀԱՂԹԱՆԴԱՄ ԸՄԲՇԱՄԱՐՏԻԿԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հունա-հռոմեական ըմբշամարտի գծով Ռոստովի մարզի առաջնության համար անցած տարվա վերջին Ակով քաղաքում անցկացված մրցումների ժամանակ մյասնիկյանցիների համար կարևոր իրադարձություն տեղի ունեցավ: Ա. Վ. Յալթրյանի անվան մանկա-պատանեկան սպորտդպրոցի շրջանավարտ Յուրի Բաղասյանը, ցուցաբերելով լավ տակտիկա և բոլոր հանդիպումներում գոտեմարտելով ամբողջ եռանդով, լրացրեց "Ռուսաստանի սպորտի վարպետ" կոչմանն արժանալու նորմաները:

Այդ մրցումներին, որ ավանդաբար նվիրվում են աշխարհի կրկնակի չեմպիոն, Օլիմպիական խաղերի կրկնակի արծաթե մեդալակիր Նիկոլայ Յակովենկոյի հիշատակին, այս անգամ մասնակցեցին Ռուսաստանի տարբեր տարածաշրջաններից և Ուկրաինայից եկած ավելի քան 120 ըմբշամարտիկներ:

Մյասնիկյանի շրջանի ներկայացուցիչ Յուրի Բաղասյանը հանդես եկավ ծանր քաշային կատեգորիայում (մինչև 120 կիլոգրամ) և հաղթելով իր բոլոր ախոյաններին, բարձրացավ չեմպիոնի պատվանդանին:

Ոգևորվելով ձեռք բերված հաղթանակով, Կուբանի ֆիզկուլտուրայի ակադեմիայի 5-րդ կուրսի ուսանող Յուրի Բաղասյանը եռանդորեն նախապատրաստվում է առաջիկա մրցումներին:



*Նկարում՝ Յուրի Բաղասյանը իր պարգևները բռնած:*

Լուսանկար՝ Վ. ՍՐԱՊԻՈՆՈՎԻ



## Շարունակվում է "Զարյա" թերթի բաժանորդագրությունը

ՍԻՐԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ, շարունակվում է "Զարյա" թերթի բաժանորդագրությունը 2014 թվականի 1-ին կիսամյակի համար:

*Բաժանորդագրվել դուք կարող եք փոստատարների մոտ, գյուղերի կապի բաժանմունքներում կամ թերթի խմբագրությունում:*

*Առաջիկա հինգ ամիսների համար բաժանորդագրության գինը կազմում է 185 ռուբլի:*


# "ՉԿՆՈՐՍԸ" ՏՈՒՆԵՆ-ՏԵՂԵՆ ԶՐԿՎԵՑԱՎ

*(ՀՈՒՄՈՐԵՍԿԱ ԹՈՓԹԻԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ)*

Շալթր գնացիլ էի: Կլուբին քովը հասա, կնայիմ դիմացըս՝ Վաճեն գլուխը կախած դեպի ինձի քուկա: Անքան գլուխը վար կախած քուկար, որ քիչիմ դըհա ըլար նը, վրաս պիտ էլլեր:

- Ի՞նչ կա, Վաճե, վըտե իդաքան խոռկըցած միտքի բաթած էիր, որ քիչիմ դըհա ըլար նը, վրաս պիտ էլլեիր,- ասի խնդալեն:

- Օֆ, անպես մեկ բելայի մեծին ընկած իմ, որ...

- Ի՞նչ պատահիլ է իդաքան բելայի ըյնելու գորա, ախպարըս:

- Շինը պատմիմ լսե.

- Աղպես պատմելու էրկան բան է նը՝ նստինք սա լավկային վրան, ահեստե պատմե: Կայնած՝ ոտքերուս պոլոժենին ըռինդ չէ,- ասի ես: Նստանք:

- Մեկ ժամանակըմ ջրեն Միկիշին ռաստ էկիլ էի... Միկիշին ալ, գիդիս դա, աչքը չորսին մեկն է՝ բաշլային իրեն սիրտին մեչի ինչ ասիս բաները պատմելու: Ալայ պատմած բաները ասելու չիմ, էրկան ժամանակ պիտ ըլա: Մեչերեն որը ինձի բելայի ձգիլ է նը, իդա պիտ պատմիմ:

- Էտեվ ինչո՞վ վերչացավ, որ դուն բելայի մեչ ընկար, ախպարըս,- չըհամբերելե հարցուցի ես:

- Ինչես գիտիս, Միկիշը մեր վրան յաշ մաշդ է դըհա: Մեկ օր գըբանե, ժեք օրը տունն է, նոմայ պարապ օրեր կունենա: Թեմբելին մեկն է, տունի բանի հետ գործ չունե, պարապ բոշ, աչքը չորս՝ շուն ջրելեն կըմանգար:

Ի՞նչ ասենը, ըռինդ է... "Մեքատ խաթի սիրտիս դուր էկած բանի ռաստ էկած իմ, սիրահարված իմ: Շինխ տունեն էլլելու հնարը գտնել պետք է համա... Կինմաշդուս՝ Հայկուշինն ալ չիմացածը կուզիմ շտե: Վայ անօրին որ իմանա, բուշտըս քամիյին պիտ տա: Ինչե՞ս անիմ, որ չիմանա՝ ասա շինը դուն հայտը ինձի",- հարցուց:

Ես ալ խաթի փորձավարծ մաշդու պես՝ հիչ միտք չանելե շախայի կարգի...

- Մաշդուն մեկին պես արա դա դունա,- ասի

- Ի՞նչես է ադ,- հարցուց խունդում էղած:

- Գնե խռմախներ, ձուկ բռնելու էշտողըս էղիր, գնա հանդիպումի: Էկած քենըդ ալ բայարեն գնե ձուկեր՝ բարկէրես կնկանդ դեմը էկիր շտե,- ասի:

- Հա, ադ խաթի ըռինդ բան ասիր ու,- ասաց, խունդումով գնաց կորավ:

Օ՛ֆ, ոչ ասեյի...

Ադ ասելես էտեվ Միկիշը չափը խայերը չիկուդնու խունդումեն: Ջեմ կանե խըռմախներ՝ պարապ օրերը խռմախները կառնե՝ "Ես ձուկ բռնելու պիտ էշթամ",- կասե կնկանը, յոնոմիշ կըլա:

Քանի օրեր աղպես... Էկած քենն ալ կըգնե բայարեն ձուկերը, քուկա տունը: Համա կնիկը ան միամիտ կնիկներեն չէ, սատանային մեկն է ախռ: Դըմ-դըմը կառնե: Միտք կանե... "Սա բանը ի՞նչ էղավ, որ պարապ օրերը շուն ջրելեն կըմանգար, շինխ ալ հիչ տունը չիկենալե ձուկ բռնելու կարնվեցավ: Սա բանին մեչը ալլեմը ծածուկ բան կա: Մենը սա բանին՝ խռմախներուն ծարի կոչոկները կտռիմ՝ նայինք կենե ձուկ կըբերե նը",- կասե միտքեն:

Միկիշը կենե աղպես՝ կառնե խռմախները, ծարերը կոչոկ կա, չիքա չնայելե՝ "Ես գնացի ձուկ բռնելու",- կասե, յոնոմիշ կըլա:

Կնիկը միտքեն... "Գնա, գնա, նայինք մեմը ինչես ձուկեր կըբերիս նը",- կասե:

Ժամանակ անցնելեն էտեվ՝ մեմ ալ կընայիս Միկիշը՝ կենե աղպես բարկէրես, ձուկերով նես կըմուտնե:

Հայկուշը, էրեսը մութ արած, Միկիշին էրեսը կընայե: Կնիկը բան դըհա չասելե, Միկիշը ինքը...

- Ի՞նչ կա, կինմաշդ, ինչի՞ իդապես կեշ էրեսով վրաս կընայիս,- կըհարցունե:

- Դուն վըտե՞խն էիր ասօր՝ ձուկ կըբռնեիր, չենե սիրողիդ գնացիլ էի՞ր,- մութ էրեսով կըհարցունե էրկանը:

- Վըտեխ պիտ ըլամ դըհա, կինմաշդ, սա ձուկերը չիս տեսնու, ի՞նչ է,- կասե Միկիշը՝ բանի վերհասու չիլալե:

- Քուկուդ ձուկերըդ առանց կոչոկի ալ կըբռնվին, ի՞նչ է,- կըկանչե կնիկը վրան: (Ախռ Միկիշը հիչ խռմախներուն վրան նայած չէ, տեսածա չէ ծարի կոչոկները կան, չիքան: Էկեր խռմախները բացած, նայած, տեսած ըլար նը, իդապես ալ ասելու չէր դա): Կնայե խռմախներուն ծարի կոչոկները չիքան: Կենե մեկ չեշիտմ բանով հրաժարվել կուզե, համա օգութ պիտ ըլա մեկեր:

- Սա էղած բանը նայե՝ իդա մեր շուն տղոցը արած բանն է կայեր: Տունը յոնոմիշ ըլալու քենըս կտռիլ ին կոչոկները՝ մեր մեչը կրակ ձգելու համար շտե, հանա տեսիր էղած բանը,- կասե Միկիշը:

- Ինչ ալ ասիս նը, հիչ հավատալու չիմ,- կասե Հայկուշը հոքայով:

- Ինչի՞, կինմաշդ:

- Կինմաշդ ալ կասե դըհա: Անոր համար, որ կոչոկները ես կտռիլ իմ,- դըհա ավելի հոքան էլլած կըկանչե էրկանը վրան:

Միկիշը դըհա հրաժարվելու տեղ չունե ախռ, ի՞նչ թող անե: Գլուխը կախած կըբաշլայե ներողութին խնդրելու:

- Էղըլ է շտե իմիսն ալ իդապես բան: Մեմ ալ չիմ անի, ջանըմ, հայտը թող վերչանա սա բանը,- կասե Միկիշը ծունկեչոք գալեն, կաղաչե, համա օգութ չունե:

- Ո՞վ իդապես քեզի խելք խրատ տուվից, որ աղպես ձուկ բռնելու բաշլայեցիր՝ ասա նայի՛նք,- կըկանչե կենե կնիկը:

Միկիշը գլուխը կախած...

- Վաճեն էր շտե սիբես արա ասողը,- կասե:

- Ես շինը նարանն ալ փետառը կըհանիմ,- կասե Հայկանուշը, յոնոմիշ կըլա մեր տունը քուկա: Աղեկ, որ ես տունը չիմ ըլա, չենե որ իմիսն ալ փետառըս պիտ հաներ: Կինմաշդուս՝ Մակուշին, սա՛դ էղած բանը կըպատմե, մեր մեչն ալ կըրակ գըձկե, կելլե կեշթա:

Միկիշն ալ կենե քանի չեշիտով ներողութին քըխնդրե, համա ինչ օգութ: Մեկ բան ֆայտա չունենա: Կռեվ, շամաթա, հալեքեթ, օրենքի էլլել՝ էրկվատ երեխաներով կըբաժնվին: Հայկուշին ալ գիտիս դա՝ Միկիշին տունեն ալ քըփախտա:

Միկիշը ի՞նչ թող անե տուն-տեղեն խալսած, կենալու տեղ փնտռելեն կըմանգա:

Էկիլ է ինձի իրեն ցավերը կըպատմե: Ինձի ալ դըհա խաբահատ ալ կըհանե: "Վաճե մեր էրիկ-կնկան մեչը կրակ ձգողը դուն էղար: Վըտեխեն քեզի իդա բանը ինչես անելուս հարցուցի, դուն ալ ինձի իդապես խրատ տուվիր: Սադ սեմյաշես ալ, տուն-տեղես ալ խալսա",- ասաց:

Շտե ադոր համար է բելայի ընկածըս, միտքի բաթածըս, քուկուտ վրատ էլլելու էղածըս: Ախռ խաբահաթի տեր էղա: Ան քիչ է դըհա՝ մեր էրիկ կնկան մեչն ալ խոշոր գալաջիներ էղան: Մակուն ներողութին կանե՝ "Ռավ դուն ուրիշին աղպես խրատ կուտաս նը, ուրեմն դուն ալ աղպես բաներ կանիս",- կասե:

Փառք Աստուծու, որ մինք մեծեծկի հասկըցանք բեջերվեցանք: Անդի կասին շտե. "Ուրիշին կամ օտարին կյանքին մեչը մի խառնըվի" դեյին: Պե՞տք էր ինձի իդապես շախա անել, վերչն ալ դըհա խաբահատի տեր ըլալ, դըհա ան քիչ է, ադիվոր թափնուքով իմիս սեմյայիս մեչն ալ գալաջիյի բաներ էղան:

Շախան խելքով, միտքով անել պետք է: Աղպես միտք չանելե շախա արածիս համար ալ սիպես բելայի մեչ ընկա շտե: Շինը իմացիլ իմ, համա ի՞նչ օգութ...

- Էյ Միկիշին ան սիրողը շինը տունը չըխոթի ի՞նչ է, հոն թող էշթա, թող կենա դա,- ասի ես:

- Էյ ադիվոր ալ դըհա կենե պետք չէ կայեր, որ "էշթալու տեղ չունիմ",- ասաց շտե:

Վաճեն վերչացուց իրեն դարտերը պատմելը... "Էհ, էշթամ տեղ հասնիմ",- ասաց, կենե գլուխը կախած յոնոմիշ էղավ գնաց:

Ասպես վերչացավ Վաճեյին հետ մեր հանդիպումը:

Ս. ԱՏԱՄԱՆՅԱՆ

գ. Թոփթի